/ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

<ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ19/4> ծածկագրով գնանշման հարցման միջոցով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որակավորման փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման
որոշման մասին

24.06.2019թ.

ք.Էջմիածին

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի՝ 20. 06. 2019թ-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/39 որոշման հիմքով ներկայացված որակավորման չափանիշները հիմավորող փաստաթղթերի շտկման վերաբերյալ

1.1 <ՀՀ ԱՄԷՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ19/4 > ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ-ի թիվ 2 արձանագրությամբ, համաձայն ՀՀ կառավարության 04. 05. 2019թ. N526-ն որոշման 47-րդ կետի, 1-ին տեղ զբաղեցնող մասնակցին <Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ> ՍՊԸ-ին առաջարկվել էր մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել կնքվելիք պայմանագրի կատարման համար տեխնիկական միջոցների մասին տեղեկանքում առկա անհամապատասխանությունը, սակայն մասնակցի կողմից մեկ աշխատանքային օրվա ընթացքում չեն ներկայացվել տրանսպորտային միջոցի վարձակալության՝ 25 մարտի 2019թ -ի թիվ 1/Վ/2018 պայմանգրի 1.4 կետում նշված /Ֆրեզ Բեռնիչ NEWHOLLAND L225/սեփականության վկայագիրը կամ գույքը ենթավարձակալությամբ տրամադրելու վարձատուի իրավունքի վերաբերյալ փաստաթուղթը, այլ մասնակցի կողմից լրացուցիչ ներկայացվել է <Սահակյան Շին> ՍՊԸ-ի և <Խաչատուրյան Բիլդինգ Գրուպ> ՍՊԸ-ի միջև 01 մայիսի 2018թ. կնքված տրանսպորտային միջոցի /Բեռնիչ-Bocat S850,2012թ/վարձակալության պայմանագիրը, որպես տեխնիկական միջոցի նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ:

Մինչդեռ նշված պայմանագրի 1. 6 կետով սահմանվում է, որ տրանսպորտային միջոցի տրամադրումը հավաստվում է յուրաքանչյուր ամիս կողմերի միջև կնքված ակտի համաձայն, որը <Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ > ՍՊԸ-ի կողմից գնահատման հանձնաժողովին ներկայացվել, ինչով կհավաստվեր տեխնիկական միջոցը մասնակցի տիրապետման օգտագործման տակ գտնվելու փաստը՝ որպես տեխնիկական միջոցի /Բեռնիչ-Bocat S850/ նկատմամբ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթուղթ:

Բացի այդ, մասնակցի կողմից չի ներկայացվել փաստաթուղթ , տրված վարձատուի կողմից առ այն, որ պայմանագիրը գտնվում է գործողության մեջ, քանի որ պայմանագրի 6-րդ մասով սահմանվում է պայմանագիրը միակողմ լուծելու վարձատուի իրավունքը՝ 10 օր առաջ տեղեկացնելով կողմին :

Այսպիսով <Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ> ՍՊԸ-ի կողմից չի ապահովվել ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. թիվ526-ն որոշման 62-րդ կետի 2-րդ ենթակետով և հրավերով սահմանված <Տեխնիկական միջոցներ> որակավորման չափանիշին ներկայացվող պահանջները, ինչը հիմք է տալիս մասնակից <Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ> ՍՊԸ-ի <Տեխնիկական միջոցներ > որակավորման չափանիշը ոչ բավարար գնահատելու համար:

2.Գնահատող հանձնաժողովի որոշման մասին:

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1. 1 կետը՝ գնահատող հանձնաժողովը, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ 04. 05. 2017թ N 526-ն որոշման 48-րդ կետի 2-րդ ենթակետի, որոշեց մերժել <Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ> ՍՊԸ-ի հայտը և 2-րդ տեղ զբաղեցնող <ԱՎԱ-2000> ՍՊԸ-ին առաջարկել ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝6, դեմ 0 :

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
<<Բարեկարգում>> տնօրինության տնօրեն՝ Մ. Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝
Էջմ. համայնքապետարանի Քաղաքաշինության և հող օգտագործման բաժնի պետ՝ Դ. Բաղալյան
<<Բարեկարգում>> տնօրինության տնօրենի տեղակալ՝ Հ. Հովհաննիսյան

<Բարեկարգում> տնօրինության <Բարեկարգում և կանաչապատում> տեղամասի պետ՝ Գ. Ֆահլբաշյան

Էջմ. համայնքապետարանի <Բարեկարգում > տնօրինության
< Բարեկարգում> տեղամասի տեսուչ Լ. Քոչարյան

Էջմ. համայնքապետարանի Ֆինանսական բաժնի
1-ին կարգի մասնագետ՝ Մ. Սարգսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Էջմ. համայնքապետարանի ֆինանսական բաժնի պետ՝ Կ.Խարբերդյան